

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԾԻՍԱԳԻՏԱԿԱՆ	ԷԶ
ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ. — Պատմություն Հայ- յոց Ազգամայությունը	49
ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ	
DJEVAHIRDJIAN S. — L'Eglise San Satiro de Milan	58
ԿՐՕՆԱԿԱՆ	
ՏԷՐ ՆԵՐՍԷՍԵՍԻԱՆ Հ. Ն. — Մեր նախնեաց հաւատքը — Պատարագ վասն ննջեցելոց	81
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
ՔԻՐՈՍԵՍԵԱՆ Յ. — «Քիւրոսեան Հաւատքածոյ»-ի թիւ 11 Ոսկեփորձիկը (Ժէ. դարէն)	92
ԳՐԱԿԱՆ	
ՏԷՐ ՄՈՎՍԵՍԵՍԻԱՆ Հ. ՍԱՀԱԿ. — Արշակ Թա- ղաւոր: Երգախառն ողբերգութիւն հինգ արարով (Շար. եւ վերջ)	68
ՀԱՆԱԾԵԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ. — Ես եւ ան (Հան- դիպում)	98
— — Յիշատակ	99
— — Վեհեաիկ	99
— — Պատարանք	100
— — Այս պահն ալ	101
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ	
ՏԷՐ ՆԵՐՍԷՍԵՍԻԱՆ Հ. Ն. — Բանբեր Մատենա- դարանի թիւ 4. (Երեւան, 1958)	102
ՔԻՐՈՍԵՍԵԱՆ Յ. — Մեր գիւղը «Գաւառ» (Պոս- քըն, 1958)	105
— — Գրիգոր Նարեկացի, Մ. Մկրտանի (Ե- րեւան, 1955)	106
ԼԵԶՈՒԱԿԱՆ	
ՏԷՐ ՆԵՐՍԷՍԵՍԻԱՆ Հ. ՆԵՐՍԷՍ. — Ի սէր «Մե- ծասքանչ»-էն	108
ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ	
Արարատի ստորոտէն — Պեղումներ Էջմիածնի մէջ	107
Ազգային այցելուներ Ի Ս. Ղազար, 1958	110

SOMMAIRE

	PAGE
LITURGIE	
HADSOUNI P. VARDAN — Histoire du Bré- viaire Arménien (Suite)	49
BEAUX ARTS	
DJEVAHIRDJIAN S. — L'Eglise San Satiro de Milan	58
RELIGION	
DER NERSESSIAN P. N. — La foi de nos ancêtre - Messe de Requiem	81
PHILOLOGIE	
KURDIAN H. — L'« Oskephorik » N. 11 de la Collection Kurdian	92
LITTERATURE	
DER MOVSESSIAN P. SAHAK — Le Roi Archak. Tragédie en cinq actes (Suite et fin)	68
DJANASHIAN P. MESROB — Lui et moi (Rencontre)	98
— — Souvenir	99
— — Venise	99
— — Illusion	100
— — Ce moment là aussi	101
RECENSIONS	
DER NERSESSIAN P. N. — Le N. 4 de la Bibliothèque des Manuscrits, « Banbère », (Erivan, 1958)	102
KURDIAN H. — « Notre village. Datem », (Boston, 1958)	105
— — « Grégoire de Narek » de M. Mkrian, (Erivan, 1955)	106
LINGUISTIQUE	
DER NERSESSIAN P. N. — Pour l'amour de la « Toute Merveilleuse » (langue armé- nienne)	108
ECHO ARMENIEN	
Aux pieds de l'Ararat - Les fouilles d'Etch- miadzine	107
Visiteurs arméniens a St. Lazare	110



1843 - 1959
ՀԺԷ. Տ Ա Ր Ի
ԹԻԻ 3 - 5
ՄԱՐՏ - ՄԱՅԻՍ

Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՑԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXVII^e année, 1959, N. 3 - 5 Mars - Mai

Պ Ա Տ Մ ՈՒ Թ Ի Ւ Ն

ՀԱՅՈՑ ԱՂՕԹԱՄԱՑՈՅՑԻՆ

(Շար. տես «Բազմավեպ» 1958, թ. 11-12, էջ 245)

4. — Զանազան տարրեր. — ա. — Այս
Ժամանակի ծանօթ աղօթքներն առ հասա-
րակ երկմասն են, որոնցմէ կան նաեւ յոյն
Ժամաղբեր մէջ, բայց բովանդակու-
թեամբ հետի են մերիններէն: Դարձեալ
մեր աղօթքներն ունին իրենց մէջ «Խաղա-
ղութիւնը», որ չի տեսնուիր յունականե-
րու մէջ. մինչդեռ այս շրջանիս շատ յա-
ճախ կը կիրարկուէր Ժամերգութեանց
պահուն՝ ըստ վկայութեան Ոսկեբերանի.
«Յեկեղեցւոյ Խաղաղութիւն, յաղթաւ եւ ի
ինդրուածս եւ յառաջին բանս քահանա-
յից. մի անգամ եւ երկիցս եւ երեցս եւ
բազում անգամ զայն տայ վերակացու եւ-
կեղեցւոյն»: Անոր բանաձեւն էր յունարէ-
նին մէջ «Խաղաղութիւն ամենեցուն», զոր
ոսկեղաբան հայ Թարգմանիչը «Խաղա-
ղութիւն ընդ ամենեւեան» կ'ընէ չորս
անգամ, վկայելով թէ մեղի յատուկ էր
այս ձեւը. եւ բուն իսկ «յաղթաւ եւ ի խըն-
դրուածս», ինչպէս է մեր պարագան:
Չենք գիտեր՝ թէ մեր ծանօթ աղօթքներէն
զորս, ո՞ր կը տրուէին այդ բազում խա-
ղաղութիւնք, որոնցմէ ոմանց տեղն ալ կը

ցուցնէ մեղի Ոսկեբերան: «Յորժամ մտա-
նիցէ վերակացուն եկեղեցւոյն, իսկ եւ իսկ
ասէ՛ եթէ Խաղաղութիւն ընդ ամենեւեան:
Յորժամ օրհնիցէ, ասէ՛ Խաղաղութիւն ընդ
ամենեւեան» . եւ տակաւին ուրիշ երկու
տեղ՝ որ պատարագին յատուկ կը թուին.
եւ կը յարէ. «ասես՝ Եւ ընդ հոգւոյդ քում»
(Թղթ. Ա., 500):
Բ. — Թէ՛ ուրիշ եկեղեցիներու եւ թէ՛ մեր
պաշտամունքներուն մէջ տեսանք խառնու-
մը ընթերցուածներու եւ անոնց մեկնու-
թիւններուն կամ քարոզներուն: Ի՞նչ բանի
մէջ կը կայանային Մանդակունիի ըն-
թերցուածներուն վարդապետութիւնները,
եւ ի՞նչպէս կը խառնուէին աղօթքներուն
մէջ: Իրենց նիւթ էին Հին եւ Նոր Կտակա-
րանները՝ ըստ Առաքելական կանոններու,
ինչպէս կը պահանջէր Լաւողիկէի Ժողովն
ալ (ԾԹ): Վանականները, ըստ Կատարան-
սի, կը կարդային Առաւօտուն եւ Երեկո-
յին¹: Իսկ տեղը Ժամերգութեան մէջ կ'ու-
սանինք Լաւողիկէի Ժողովէն (360ին), որ

1. Բէռլին, Ա., 388:

կը սահմանէր այսպէս. «Մի՛ խոսողովս կը-
ցեացեն զսաղմոսն ընդ միմեանս, այլ
զհետ միոյ սաղմոսի կարգացումն արաս-
ցեն» (Ժէ)։ Հ. Լիլլերկ տարակուսեցաւ՝ որ
այդ ոճն երբեք կիրարկուած չըլլայ²։ Իսկ
Բէնեմէր ուրեց իմանալ այդ երախայից
պատարագին մէջ (Ա., 123)։ Ինչ ալ եղած
ըլլայ, ընթերցման տեղը սաղմոսներուն
մէջ էր միշտ։ Մինայի վանքը հսկումի սրա-
հուն՝ իւրաքանչիւր կանոնի մէջ (որ թի-
ւով երեք էին) կը կարգար առաքելական
թուղթերը³։ Ուրիշ արեւելցիները կը կար-
դային ըստ Կասիանոսի՝ երկու կտորներ,
մին՝ Հին, եւ միւսը՝ Նոր Կտակարանէն.
իսկ շաբաթ ու կիրակի՝ նոյնպէս երկու,
բայց մէկը Պողոսի թուղթերէն, եւ միւսը՝
Աւետարանէն։ Նոյնպէս եւ Զատիկի շրջա-
նին Նոր Կտակարանէն միայն, ըստ Կա-
սիանոսի, Ոսկեբերանի եւ ուրիշներու⁴։

Մեր քով ալ կը տեսնուին միեւնոյն «ըն-
թերցուածք աստուածային կտակարա-
նացն» ըստ Եղիշէի, կամ «ընթերցուածք
հոգեպատում գրոց»՝ ըստ Կորիւնի, որ
աւելի ընդարձակ նշանակութիւն ունի.
այսինքն Աստուածաշունչը, անշուշտ բաժ-
նուած եւ մեր քով նման ուրիշներու, եւ
այլ հոգեւոր գրքեր, շարադրուած Ս.
Հայրերէն, եւ մանաւանդ վկայարանու-
թիւններ՝ որ յիշուած եւս են թէ՛ միւս
եկեղեցիներու մէջ⁵, թէ՛ Հայոց մօտ.
եւ որոնց տեղն ալ կը ճշտէ Փարպեցին,
գրելով՝ թէ Արշալիւր Կամսարական, տե-
ղեկացած Ղեւոնդեանց նահատակութեան
ականատես վկայէն, անոնց բերնէն լըս-
ուած խօսքերն ու խրատները, դահլիճե-
րուն տուած պատասխաններն ու մատու-
ցած աղօթքները՝ սաղմոսերգութեան պա-
հուն «ընդ գուրգայս սաղմոսին միաբա-
նեալ՝ պատմէր անձանձրոյթ հանապազ»
իրբեւ կենդանի վկայախօս (316). այս-
ինքն ընդմէջ գուրգայնեալ, որ հոմանիշ
է արիւնջեւոց սաղմոսականոններու մէջ
խառնուելուն։ Ասոնք էին ուրեմն ժամա-

նակին ընթերցման նիւթերը, որոնք յետոյ
պիտի բարդուին։ Թումաս ճշնաւոր, Է.
գարուն, «զկանոնն ընդ տիւ եւ ընդ զի-
շերն երեցս անգամ վճարէր ընթերցմամբ»
ըստ Յովսիայի (Ը. դարուն), որ թէպէտ
ուշ, բայց իր վկայութիւնը համաձայն է
ժամանակի սովորութեան⁶։

Գ. - Մեկնութիւններ կամ քարոզութիւն-
ներ ալ կը կատարուէին՝ ըսինք՝ հասարա-
կաց աղօթքին հետ, աշխարհի եկեղեցիներ-
ուն մէջ՝ կիրակիներուն վերապահուած,
որպէսզի դային ու լսէին հաւատացեալնե-
րը՝ որոնց համար իսկ կ'ըլլային՝ ըստ վը-
կայութեան Եթերիայի։ Մեր քով յիշուած
բեմադրութիւնները նոյնպէս կատարուած
են հանդիսական օրերու կամ պատահա-
րուն հետ։ Այսպէս Պարսից բանակին մէջ
զինուորեալ Հայերը իրենց հասարակաց
պաշտամունքը կը լրացնէին «մեծապա-
ծաւ վարդապետութեամբ»։ Երբ Վահան
Մամիկոնեան յաջողութեամբ դարձաւ
Պարսից դռնէն, Հայերը բարեպաշտական
օրեր անցուցին Վարդապետու կաթողի-
կէին ու վկայարաններուն մէջ, կ'ըսէ Ղա-
գար. «մեծապէս ցնծութեամբ սաղմոսիւք
եւ նախիւ հոգեւոր վարդապետաց» (541)։
Եւ երբ նոյն իշխանը՝ Հայոց մարզպան
կարգուեցաւ, անոր հետ հայ ժողովուրդը
խուռներամ եկեղեցի փութաց՝ գոհու-
թեան աղօթքներ մատուցանելու, եւ Յհ.
Մանդակունի «ինքն իսկ եկեալ ի տեղի
լսողութեանն աստիճանի, եւ տուեալ զխա-
ղաղութեան ողջոյն», - որ է «Պաղաղու-
թիւն ընդ ամենեանն»՝ որով կը սկսէր,
- քարոզ մը խօսեցաւ, կ'ըսէ նոյն պատ-
միչը (548)։ Եւ տակաւին ԺԱ. դարուն՝
Կարմիր վանքի մէջ, կաթողիկոսական այ-
ցելութեան մը առթիւ կատարուած «ի զի-
շերային պաշտամունսն» քարոզ մը կու
տայ Ստեփանոս վարդապետ⁷։ Հաւանօրէն
մենաստաններու մէջ աւելի յաճախուած
էր Կորիւնի յիշած «յորդորական վարդա-
պետութիւնն» յօգուտ վանականներու իսկ.

եւ զոր պատմիչը դասած է յետ ընթերց-
ուածին, ինչպէս իսկապէս ալ կ'ըլլար,
ստեղծ նիւթ առնելով կարգացուած գրքին
բովանդակութիւնը։ Ուստի հասարակաց
աղօթից մէջ՝ իր սովորական տեղն էր Գի-
շերային ժամը։

Մովսէս Խորենացին յանձին Սահակայ,
որ խօսեցաւ Պարսից արքային առջեւ՝ ի
պաշտպանութիւն իր անմեղութեան, կը
նկարագրէ քարոզիչներու սովորական կեր-
պը. «կանգուն կացեալ, պարկեշտ եւ նա-
զելի զինքն կազմեալ ի բեմադրութեան
ձեւի, համեստ հայեցուածովք, համեստա-
գոյն եւս ձայնիւ սկսաւ ճառել» եւ այլն
(Գ, Կէ)։ Ոսկեբերան ալ կը յիշէ այդ հան-
դամանքին առաջինը. «վասն քո կայ յոտն
ուսուցիչն» (Մտթ. Ա., 495)։

Դ. - Փառատրութեամբ կը վերջանային
սաղմոսները, աղօթքներն ու քարոզները,
որուն կ'ակնարկէ Մանդակունին, յիշելով
«գիւտաբանութիւնսն» պաշտամանց մէջ։
Ըստ Կասիանոսի տեղեկութեան՝ արեւել-
ցիները դայն կը յաւելուին սաղմոսներու
խումբերու ետեւ՝ առաւօտուն եւ երեկո-
յին⁸, ինչպէս է ցարդ յունական ժամա-
պարհէն մէջ։ Անկասկած նոյնպէս էր Հայոց
քով ալ. եւ կը շարունակուէր մինչեւ Ժ.
դար, ուր Խորոյ կը գրէր. «ամենեցուն
միաբան է իշխանութիւն ի սաղմոսն եւ ի
փառս գուրգայիցն» (42-43). այսինքն՝ թէ
Փառքը կը տրուէր յետ իւրաքանչիւր
գուրգայի, որ մեր՝ սաղմոսախումբերն
էին։ Եւ անոր բանաձեւն էր՝ Փառք Հօր
եւ Որդոյ եւ Հոգւոյն սրբոյ (44), որուն
վրայ Դ. դարէն աւելցաւ «այժմ եւ միշտ
եւ յաւիտեանս յաւիտեանից. ամէն»⁹, ինչ
որ ունի եւ Փարպեցին՝ Վահանի ուղղուած
թուղթին ծայրը. «ի փառատրութիւն ա-
նուան իւրոյ սրբոյ, այժմ եւ միշտ եւ յա-
ւիտեանս յաւիտեանից. ամէն» (613), եւ
այլ շատեր, ինչպէս աւելի վար։ Առանձին
պաշտուած ու միակ սաղմոսներն ալ ու-
նէին նոյն յաւելուածը։ Այսպէս Վարդա-
նանք՝ Աղուանից աշխարհէն դառնալու
ժամանակ՝ կ'երգէին ՃԼԵ սաղմոսը, որուն
աւարտման, կ'ըսէ Եղիշէ, «փառատրու-

թիւն Երրորդութեանն մատուցանէին»
(122)։ Նոյնն եւ Խորոյ կը յիշէ Ծ սաղ-
մոսին վրայ (148)։ Կանոնը նոյն է. սաղ-
մոսները մէկ կամ խումբ, փառատրու-
թեամբ կ'աւարտին միշտ։

Քահանայական աղօթքներն ալ նոյնպէս
կը վերջանային, բայց անհաւասար ձեւե-
րով։ Ս. Սահակի յօրինածները ունին
Խորոյու քով այս աւարտները. «Բեգ վա-
յել փառք իշխանութիւն եւ պատիւ այ-
ժմ...» (85). «որում վայել փառք իշ-
խանութիւն եւ պատիւ՝ այժմ...» (87).
«ի փառաբանութիւն եւ ի պատիւ ամենա-
սուրբ Երրորդութեանդ՝ այժմ...» (71).
«անդադար փառաւորել գՀայր...» (52).
«Բեգ փառս մատուցանել Հօր...» (57).
«եւ գոհանալով փառաւորեցուք ըգ-
Հայր...» (97). «փառաւորել գՀայր...»
(99)։ Մանդակունին շարադրածները կը
վերջանան հետեւեալ վերպով. «Եւ ընդ նո-
սին գոհանալով փառաւորեցուք գամենա-
սուրբ Երրորդութիւնդ՝ այժմ...» (30).
«Եւ ընդ նոսին գոհութեամբ փառաւորե-
ցուք գՀայր...» (302)։ Ս. Ներսէսի Նպատ
լերան աղօթքն ունի աւելի համառօտ ձեւ
մը, ըստ Փաւստոսի. «նմա փառք յաւի-
տեանս» (196), որ Պողոս Առաքելի ձեւն
է (Հո. ԺԱ., 36). եւ Զուրիթ երէցի աղօթ-
քին մէջ ընդարձակուած է այսպէս. «ընդ
որում Բեգ փառք եւ գորութիւն եւ իշխա-
նութիւն, միաձնի Որդոյ Բո սիրելոյ Յի-
սուսի Քրիստոսի, եւ կենդանաբար Հոգ-
ւոյ Բում սրբոյ՝ յառաջ Բան գամենայն
յաւիտեանս, այժմ եւ միշտ...» (175)։

Քարոզութիւններն ալ ունին նոյն եւ
նման աւարտներ։ Յաճախապատումին
կիրարկածներէն ոմանք հաւասար են ա-
ռաքելականներուն հետ. «ի փառս ամենա-
սուրբ Երրորդութեան այժմ...» (18).
«վայելել ի փառս ամենասուրբ Երրորդու-
թեան Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն սրբոյ
յաւիտեանս յաւ...» (22). «որում փառք
յաւիտեանս յաւ...» (32, Գաղ. Ա. 5. Բ.
Տխմ. Գ., 18). «որում փառք յաւիտեանս.

2. Կարբուլ, Ա., 1293:

3. Բէնեմէր, Ա., 24, 183:

4. Անդ., 388-89:

5. Բէնեմէր, Ա., 383:

6. Հայրապատում, 191:

7. Հայրապատում, 278:

8. Բէնեմէր, Ա., 178:

9. Անդ.,



ամեն» (45. Երբ. ԺԳ, 21). «Վառապարհիկ միշտ գամեցաւ որք երբորդուքիւն յաւիտեանս յաւ...» (56) եւ այլն: Մանգակուն ինչին ճառերուն մէջ կը կարգանք. «որում փառք յաւիտեանս» (37). «որում փառք եւ պատիւ յաւիտեանս յաւ...» (20. Ա. Տխմ. Ա., 17). «որում փառք եւ պատիւ եւ գոհութիւն յաւիտեանս յաւ...» (46). «որում փառք եւ գործութիւն յաւիտեանս յաւ...» (70. Ա. Պետ. Դ. 11) եւ այլն. եւ Վահանի մարգարանութեան առթիւ խօսածը կ'աւարտէ. «ընդ որում Հօր՝ միանգամայն եւ Հոգւոյն սրբոյ վայելի փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ...» (559): Ունինք Եղիշէի ճառերն ալ այս վերջերով. «նորա մարդասիրութեան վայելին փառք իշխանութիւն...» (206). «նմա փառք յաւիտեանս. ամեն» (212). «որում փառք յաւիտեանս յաւ...» (239). «որում փառք եւ գործութիւն այժմ եւ յաւիտեանս» (328) եւ այլն: Նման վերջաբաններ կարելի է տեսնել Ոսկերեւանի, Բարսղի եւ այլ Ս. Հայրերու գործերուն մէջ եւս, որ հայագած են:

Դիտելի է՝ որ այդ բոլոր փառաւորութիւնները կ'աւարտին ընդհանրապէս երբայական Ամեն բառով, զոր սաղմոսներուն ծայրը կ'ըսէին զպիւրները, ըստ որում ատոր հակառակ տեղեկութիւն չկայ: Աղօթքին վերջը՝ կ'ըսէր Ժողովուրդը. իսկ յետ քարոզին՝ բեմբասացն իսկ, ինչպէս կը զգացնէ Եղիշէ՝ թէ Ղեւոնդ հայ զինուորներու խօսածը «փառաւորելով կատարեաց՝ զԱմենն ասելով» ինքն իսկ (122): Պօղոս Առաքեալ նոյն բառով կը կնքէր միշտ իր թուղթերը, որմէ սորվեցաւ եւ եկեղեցին: Ատոր հայերէնն ալ կ'երեւի երբեմն, Եղիցի, ինչպէս Բ. Օրինաց (Իէ, 10-26) եւ Թուոց մէջ (Ե, 22), եւ ՀԱ. սաղմոսին ծայրը կրկնուած է Եղիցի, Եղիցի, ինչպէս կ'ըսենք ցարդ Արեւազալի յառաջաբաններուն մէջ:

5. - Երգեր. - ա. - Այս չըջանիս սաղ-

մոսարաններու բոխնդակութենէն զուրս կային նաեւ նորաստեղծ երգեր, որոնց մասին կը վկայէ Եւսեբիոս, ըսելով՝ թէ «սաղմոսք իսկ եւ երգք ի նախնեաց անտի յեղբարց հաւատացելոց յօրինեալք, աստուածաբանելով փառաբանեն զՔրիստոս Բանն Աստուծոյ» (Պտմ. Եկ. Ե, իր): Ատոնցմէ Լիլերկ հաւաքեց քառասուն կըտոր, եւ ինք հատ ալ չարափառներու կողմէ չարադրուած¹⁰: Առաջին խումբէն տասնըհինգը Նոր Կտակարանէն են, (Մարիամու եւ Զաքարիայի երգերն էն...), եւ միւսները՝ Ս. Հայրերու գրութեանէն եւ անվաւերականներէ հանուած աղօթական ձեւեր են, ընդհանրապէս շատ համառօտ եւ առանց համաչափութեան: Ոմանք իսկապէս երգեր են. սակայն մեծ մասին համար ոչ մէկ ապացոյց կայ՝ թէ եղանակաւոր էին, կամ թէ կիրարկուած էին հասարակաց աղօթքին մէջ, ինչպէս կը խոստովանի հրատարակիչն ինքնին ու Բէնու-մէր (Ա., 84):

Ատոնց կարգէն են Եփրեմի «կցուրդին» ալ, ծանօթ ոսկեղարեան հայ թարգմանութեան մէջ միայն, որ էր կարճառօտ տուներով իսկական երգ մը, զոր օրինակ «Օրհնեալ է որ ի հինգ նկանակէն յազեցոյց հաղարս բաղումս», կամ «Քեզ օրհնութիւն, տէր մեր, զի ի շնորհաց քոց կերակրին ամենայն հաւատացեալք» եւ այլն. զորս Եփրեմ մեկնեց մի առ մի¹¹: Ինքն իսկ Ս. Եփրեմ չարադրեց բաղմաթիւ չափածոյ երգեր, զորս սոնական օրերուն նուագել կու տար կուսաններու, եւ ինք քնարով կ'ընկերէր ըստ կենսապիւրին: Իրեն ուրիշ հետեւողներ ալ ունեցաւ Դ-Ը. դարերուն¹²:

Ատոնց նման իրական երգերն ալ յայտնի չէ՝ թէ ո՛ր չափով մուտ գտած էին պաշտամունքին մէջ: Եւսեբիոս չի վկայեր՝ թէ իր յիշածներն աղօթքի մասն էին, ոչ ալ Եփրեմի կենսապիւրը: Եւ եկեղեցւոյ մէջ կային շատեր՝ որ կը խորհէին Ս. Գրքէն զուրս չարադրուած երգերէն: Այս-

պէս Լաւորիկեայ Ժողովը (360ին) սահմանեց՝ թէ «21 արժան սաղմոսս առանձինս (կամ առմկական) պաշտել յեկեղեցւոյ» փոխանակ դաւթեանց (ՄԹ): Սինայի աղօթքներու նկարագրութեան մէջ կը յիշուին չարականներ, երգեր՝ սաղմոսներու բաժանմունքի միջեւ, ու մեղեդիներ՝ որ կը նուագուէին Եփրատոսի աշխարհիկ եկեղեցիներուն մէջ, եւ զորս նոյն մենաստանը չէր ընդունած՝ իրբեւ աւելորդ ու խոտելի պերճանք¹³: Հերձուածոյներն անգամ խոժոռ կը նայէին ատոնց, եւ Պօղոս Սամոսացին իր եկեղեցւոյն մուտքը փակած էր այդպիսիներու առջեւ¹⁴: Բացառութիւն կը վաղմէին շատ սակաւ կտորներ՝ հասարակաց ընդունելութեան արժանացած: Առաք. Սահմանադրութիւններն ալ անոնցմէ ունէին երեք (Ե. իսը), եւ ուրիշ մը կայ Աղեքսանդրեան ծանօթ Աստուածաշունչին մէջ, ազատօրէն յօրինուած անոր ինչ ինչ մասերուն վրայ եւ յարած մարդարէական օրհնութիւններուն. բայց ատոնք ալ անելի բախտաւոր չեղան, եւ մնացին առանձնացած:

Բ. - Այդ երգերուն ընդհանրականութեան ապացոյցներէն մէկը պիտի ըլլար՝ մուտքը նաեւ մեր ժամակարգութեան մէջ: Ընդհակառակն ատոնցմէ զգուշացեր են նաեւ Հայերը, այնպէս որ Ե. դարու մեր ժառանգարութեան մէջ բոլորովին անյիշատակ մնացեր են, ի բաց առեալ Եփրեմի կցորդները, որ աղօթքի մէջ չեն մտած: Այսպէս Եղիշէ եկեղեցւոյ պաշտօնեաներու եւ հայ իշխանութիւններու բերանը կը դնէ լոկ «սաղմոս»: Դարձեալ վասն գտանելոյ քարոզին մէջ կայ՝ «որք սաղմոսիւք եւ օրհնութեամբ կատարեն զամենայն ժամանակս կենաց իւրեանց»: Եւ Յաճախապատումը կը յիշէ նոյնպէս՝ «զանուհաստութիւն գաղմոսից եւ գօրհնութեանց» պաշտօնից բերնէն (119): Արդ, այդ երեք ժառանգարները երգի նիւթ կը ճանչնան սաղմոսներն ու մարդարէական օրհ-

նութիւնները միայն, եւ ուրիշ չարադրածներ անծանօթ են իրենց: Կայ արդարեւ յիշուած երգ բառն ալ աղօթքին մէջ, բայց համանշարար ատոնց: Այսպէս Կորին աղանդեց վանականներու պաշտամունքին՝ սոսկ «երգովք հոգեւորօք», որոնց մէջ իմանալու ենք յիշեալ երգուտարները, ըստ որում երգութեան ալ եղանակաւոր երգեր էին՝ եւ օրհնութիւնները Աղեքսանդրեան գրչադրին մէջ ալ փօշ կը կոչուին, որ է երգ: Այս մտքով՝ Հայերը Պարսից բանակին մէջ կ'աղօթէին, կ'ըսէ Եղիշէ, «սաղմոսիւք եւ երգովք հոգեւորօք», որոնց վերջինները դարձեալ անհրաժեշտ օրհնութիւններ են: Վարդանանք՝ ըստ նոյն պատմիչին՝ Աղուանից աշխարհէն կը դառնային «Երգս ի բերան առեալ», որուն նիւթ կը նշանակէ ինքն իսկ ՃԼԵ սաղմոսը (121): Եւ Յաճախապատումն «հոգեւոր երգ» կ'անուանէ Երից մանկանց օրհնութիւնը: Որով առանձին չարադրութեամբ երգեր անյիշատակ են մեր քով:

Ուրիշ բացատրութիւն մ'ունի Ղազար, թէ Ժողովուրդն ամէնուրեք կը խայտար՝ «սաղմոսելով եւ կցորդս ասելով»: Կցորդը արմատակից է կցել բային, եւ կը նշանակէ յաւելուած. աղօթքի իմաստով՝ սաղմոսներուն վրայ: Ըստ այսմ՝ եկեղեցական գրքերու մէջ կցորդ կը կոչուի եւ այն խորհրդաւոր սաղմոսատունը, որ սոնական օրերուն սաղմոսէն կ'ընտրուի եւ կը դրուի կամ կը կցուի անոր սկիզբը, եթէ արդէն սկիզբը չի գտնուիր: Այս իմաստով Օձնեցին եւս կիրակի օր երգուած Օրհնեցէք մանկունքը կը փոխէ անոր կցորդով՝ «Եղիցի անուն տեառն», ուր միւս փոխերը կ'անուանէ իրենց առաջին բառերով (28): Կցորդի այս դրութիւնն հին է, եւ կայ արդէն Պաքոմէոսի կանոններու մէջ, ինչպէս տեսանք: Նոյն բառը նկատեցինք վերեւ Եփրեմի թարգմանութեան մէջ նաեւ առանձին երգի նշանակութեամբ: Նոյնն ունի երրորդ իմաստ մ'ալ. Ոսկերե-

10. Կարբուլ, 2, 2826-2864:

11. Սոփերք հայկ. ԻԴ:

12. Կարբուլ, 2897-2899:

13. Բէնումէր, Ա, 184:

14. Կարբուլ, ԺԲ, 1964:

7. — Ազօթամատոյցը. — Յետ զննելու իր տարրերն այս շրջանին, մենք կարող ենք այժմ կազմել դայն: Ուղեցիկը նշմարել դայն մեր զրջագիր Սաղմոսարաններու մէջ՝ իբրեւ հայ անդրանիկ աղօթամատոյցը: Այդ օրինակներէն լաւագոյնները կը սկսին ԺԴ. դարէն, երբ մեր ժամագիրքն արդէն վաղուց գտած էր իր լրումը: Սաղմոսականոնները եւ մարգարէական օրհնութիւնները նոյն մատենանին առաջին ու հարազատ նիւթերն էին անկասկած: Բայց ի՞նչ կ'ընեն այդ յետին օրինակներուն մէջ — եւ իրենց միայն — Սահակի եւ Մանգակունիի քարոզներն եւ աղօթքներ, մինչ անոնց բաղմամբիւ երկար ու կարճ նմանները դուրս կը մնան: Եւ դարձեալ՝ Մանասէի աղօթքը արդէն ստացած իր յաւելումը Օչնի 1319ի եւ Մարիունի ժամագրքերուն մէջ, 1356ի Սաղմոսարանն ունի տակաւին համառօտ ձեւով: Յիշեալ երկու ժամագրքերու մէջ Սաղմոսարան եւ Աղօթամատոյց ամբողջապէս խառնուած են իրարու հետ, եւ տրամաբանական է այդ, միասին պաշտուելու համար: Բայց միւս գրչագիրներու մասնական խառնուրդն ուրիշ կերպով չի մեկնուիր, եթէ ոչ՝ եղբակացիներով որ այդ հնագոյն մասերը սկիզբէն կային Սաղմոսարան աղօթամատոյցին մէջ, եւ հոն ալ մնացին հաւանաբար եւ ըստ հաճոյս ընդօրինակողներուն, եւ ատոր համար՝ անհաւասար ձեւով: Անկասկած Սաղմոսարանին մէջ էին երկու հնաւանդ երգերն ալ, որոնք միջին դարուն խաղաղութեամբ՝ անցան երգարաններու մէջ, եւ ապա նաեւ ժամագրքին:

Ընդհակառակն յետոյ մտած են 1356ի զրջագրին մէջ գիշերային օրհնութեան յաջորդող եւ աղուհացից սեպհական ութ մաղթանքները. «Քրիստոս է իմ Աստուած եւ փառաւոր առնեմ զսա» եւ այլն. եւ Ս. Ղազարու 1646ի օրինակին մէջ (Թ. 127) նոյն ժամու վերջին չորս կարճառօտ մաղթանքները. «Սաղմոսիւք եւ օրհնութեամբ անդադար» եւ այլն, որոնք միջին դարուն ստեղծուեցան, եւ սաղմոսականոններու մաս կարծուեցան զրիչներէ. ուր նոր Սաղ-

մոսարաններու մէջ յետամուտ ըլլալուն պատճառով՝ կը պակսին մեր երկաթագիր եւ 1455ի օրինակներուն մէջ:

Արդեօք մեր նկատածներէն դատ՝ սաղմոսներ եւ աղօթքներ չկային՞ այս շրջանին պաշտամունքին մէջ: Ըսինք՝ թէ առանձին սաղմոսներ պէտք էր որ ըլլային: Գալով աղօթքներուն, նկատելով որ այս ժամանակի շարադրութիւնները ծանօթ էին յանուանէ հեղինակներուն իսկ, — բացի մէկէն, — թէ ընդհանրական եկեղեցւոյ զրութեան մէջ աղօթքներու թիւը շատ չափաւոր էր եւ սաղմոսներու հետ կապուած, եւ մերիներն ալ այդ սահմանով՝ բաւականացած էին օրուան ժամերուն յատկացուած սաղմոսականոններով, եւ թէ ատոնք միայն կը մնան Սաղմոսարաններու մէջ, աւելորդ կ'ըլլայ խորհիլ ուրիշներու զոյութեան՝ ատոնց քով:

Այս էր ահա Ե. դարու մեր Աղօթամատոյցին բովանդակութիւնը: Իր տարրերու տեսակներով՝ նման միւս արեւելեան եկեղեցիներու, իսկ անոնց ընտրութեամբ, դասաւորութեամբ եւ յաւելումներով՝ ստացած հայկական կերպարանք մը: Իր այս կառուցման մէջ յայտնի եղան նաեւ երկու նշանաւոր հայրապետներու՝ Ս. Սահակի եւ Յ. Մանգակունիի ձեռքերը: Հետագայ զրիչներու երեւակայութիւնը պիտի ստեղծէ ատոնց ուրիշ գործակիցներ եւս. զոր օրինակ Թովմա Մեծոփեցին տեսաւ հոն եւ արձանագրեց իր ժամագրքին մէջ՝ մասնակցութիւնը « Լուսաւորչիմ Գրիգորի եւ Սահակայ հայրապետի, եւ Մեսրոպայ վարդապետի եւ Գիւտայ եւ Յովհաննու հայրապետաց մերոց, եւ այլոց վարդապետացն »: Հեղադրեալներուն ալ ընծայելով մասեր՝ որ զոյութիւն անգամ չունէին այս շրջանին: Չափազանց դիւրութեամբ կը յերկրէր միջին դարն իր տեսութիւնները, որոնցմէ հարկ է ըզգուշանալ, ի մէջ ճշմարտութեան:

Այժմ ամփոփենք եւ դասաւորենք մեր քննութեան արդիւնքը:

Պ Ա Տ Կ Ե Ր

Ե. ԴԱՐՈՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ

ԳԻՇԵՐԱՅԻՆ

Քարոզ. — Չուարթացեալքս...

Ազօթ. — Չքէն զոհանամք...

Կան. Ա. — Երանեալ

Օրհն. — Օրհնեցուք զՏէր

Քարոզ. — Վասն ի զիշերի

Ազօթ. — Ի զիշերի —

Հովիւ քաջ

Ընթերցմունք ի մէջ գուրդայից

Քարոզութիւն ի Կիւրակէի

Օրհնութիւն Ժողովրդեան

ԱՌԱԻՑՏԵԱՆ

Կան. Գ. — Մի՛ նախանձիր

Օրհն. — Զի հուր — Ծաներուք

Քարոզ. — Վասն ուղղելոյ

Ազօթ. — Տէր տուրնջեան —

Չքէն որ յամենայնի

Կան. Գ. — Ողորմեա ինձ

Օրհն. — Հաստատեցաւ

Քարոզ. — Վասն գտանելոյ

Ազօթ. — Գոհանամք զքէն —

Կենդանարար

Օրհն. — Օրհնեալ ես, Տէր

Մեծացուցէ (ի Կիւրակէի)

Օրհնեալ Տէր Աստուած

Արդ արձակեա

Օրհնեցէ՛ք զՏէր յերկնից

Օրհնեցէ՛ք զՏէր յօրհնութիւն

Օրհնեցէ՛ք զԱստուած

Երգ՝ Փառք ի բարձունս

Օրհնութիւն Ժողովրդեան

ԵՐՐՈՐԴ ԺԱՄ

Կան. Ե. — Իբրեւ զի բարի

Օրհն. — Ի զիշերաց

Քարոզ. — Միաբան ամենեքեան

Ազօթ. — Որ ի քրոյրէական —

Որ էիր յառաջ

Օրհնութիւն Ժողովրդեան

ՎԵՅԵՐՈՐԴ ԺԱՄ

Կան. Զ. — Տէր ապաւեն

Օրհն. — Ես ասացի

Քարոզ. — Արթուն մտօք

Ազօթ. — Չղեցո մեզ Տէր —

Երկնաւոր խաղաղութեամբդ

Օրհնութիւն Ժողովրդեան

ԻՆՆԵՐՈՐԴ ԺԱՄ

Կան. Է. — Խոստովան եղերուք

Օրհն. — Օրհնեցէ՛ք զԱստուած —

Ի նեղութեան

Քարոզ. — Սուրբ սրտիւ

Ազօթ. — Տէր զօրութեանց —

Օրհնութիւն Ժողովրդեան

ԵՐԵԿՈՅԻՆ

Կան. Ը. — Ի նեղութեան

Օրհն. — Տէր, զուր քո

Երգ. — Լոյս զուարթ

Քարոզ. — Աղաչեցուք

Ազօթ. — Լուր ձայնից —

Քեզ երկիր պապանելով

Տէր Ամենակալ

Օրհնութիւն Ժողովրդեան

Աղօթքի այս բոլոր մասերը հաստատական մնացին յաջորդ դարերու ընթացքին, եւ յիշատակուեցան նաեւ կարգ մը վկաներէ. բայց հետզհետէ բարդուեցան եւ ոմանք ալ կարգ մը փոփոխութիւններու ենթարկուեցան:

Հետագայ շրջաններու քննութեան մէջ՝ այլեւս պիտի չտեսնուին, առանց հարկի, այն մասերուն որ յարատեւեցին անայլայլ եւ հասան մինչեւ մեզի, այլ պիտի մատնանք անոնք միայն՝ որ կրեցին կարեւոր փոփոխումներ կամ թօթափումներ:

Այս ուղղութեամբ պիտի վարուինք նաեւ միւս նորամուտ մասերուն հետ, խուսափելու համար անօգուտ կրկնումներէ:

(Շարունակելի)

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ